

Յանկարծ ցորենի պարկերուն ետեւ մէկը՝ կացինով զինուած դուրս թռաւ և աւազակի ծոծրակին մէջ զամեց կայինը:

Թոփալ-Հասան այս անակնկալ հակառակորդը նշմարելով, ձեռքի թովր, որով կապելու գրադուած էր ձերուկին, վար ձգեց, գօտիի տակէն հանեց տորճանակն ու Կրալիչի վրայ արծակեց: Զրադացը ծխով լեցուեցաւ, լամպարի լոյսը մարեցաւ, ու ամենքը թաղուեցան մութի մէջ: Սարսափելի կոիւ մըն է, սկսեց երկու հակառակորդներուն մէջտեղ, մարմին մարմնի, շունչ շնչի կոխ մը, որուն միայն ազօրեպանը՝ վերջապէս ուշաբերած: Շան ունոցն ալ խառնուեցաւ մարդական յուսահատ ու վայրագ մոնչիւններուն: Կաղ Հասանը ցույի ուժ ունէր: Բայց Կրալիչը անոր դանակը ձեռք ձգելով՝ մինչև կոթը խրեց զայն թուրքին կոկորդը: Երբ ճրագը վառեցին, Թոփալ-Հասանը ջղաձգօրէն կը թաւալէր գետնին վրայ:

Կը բաւականանամ այսքանը մէջ բերելով:

Կրալիչ՝ փողովորդական հերոսն է որ իր խանդավառ խօսքով, իր անձնուէր գործունէութեամբ յարութին առնել կուտայ մեռած գիտակցութիւններուն, թմրած, ընկճուած կամբերուն:

Թարգմանուած է վէպի առաջին մասը միայն: Աւելորդ է ըսել, թէ Ղծի տակը, չնորհիւ իր քառական յաջող լեզուին, պիտի կարգացուի մեծ հետաքրքրութեամբ:

ԶԱԽԷՆ

Գ. Ե., «ԱՊՐԵԼՈՒ ԴԱՂՏՆԻՔԸ», Բագու, 1903 թ., 46 եր., զինը 5 կողէկ:

Այս գրքոյկը կը շօշափէ հրապարակախօսութեան յաճախակի նիւթ դարձած հրատապ հարց մը—ինտելլիգենտներու դիւզական համայնքներու մէջ գործելու հարցը:

Միջնակարգ դպրոցն աւարտած գիւղացի երիտասարդ մը կ'որոշէ անմիջապէս հեռանալ քաղաքէն, զառնալ իր հայրենիքը և նուիրուիլ այն հասարակութեան, «որ իրեն ծնել էր, որ իրենում ծնեցրել էր ըլլոր այն թերութիւնները, որ ունէր ինքը, հէնց այն հասարակութիւնը»:

Այդ ինտելլիգենտն ունի «ազնիւ իդէալներ և բարի ձգտումներ. նա պատրաստ էր իր շահերը զոհել հասարակութեան շահերը պաշտպանելու համար»:

Կարճ խօսքով՝ ոգևորուած երիտասարդ մը, որ տակաւին անիփորձ է, իրականութեան ապառաժին չը բաղխած:

Իր հետ ուսումնարանն աւարտած մէկ քանի ընկերներ՝ իրմէ աւելի բաղդաւոր՝ կ'երթան «քաղաքակրթուած երկրներ» այնտեղից լոյս ու գիտութիւն բերելու և իրենց հայրենիքում տարածելու»:

Իդէալի համար իրենց պաշտամունքն այնքան մեծ է որ դէպի գիւղ դարձող իրենց ընկերոջ ողջերթի և յաջողութեան ձաշ մը կը սարքեն:

Մարտիրոսեան գիւղի մէջ եօթ տարի մնալէ յետոյ բոլորովին յուսախաբ կ'ըլլայ խաւար չըջապատի յարաբերութենէն:

Իր կրած հոգեկան ասնջանքներուն վրայ աւելցաւ իր ծնողքին արհամարհանքը: Այդ գիւղական ուսուցիչը շատ չէր չաներ բնականաբար. շահածին մեծ մասը կը յատկացնէր գրքի և լրագրի: Իր ծնողքը աւելի լայն չափերով օգնութիւն կ'ակընկալէր իրմէ: Կը տեսնէին որ այսինչի, այնինչի տղան քաղաքներու մէջ կարիքի դարձերու գլուխ անցած՝ ոչ միայն իրենց ծնողքին կ'օգնէին, այլ և փող կը դիգէին: «Իզուր, իզուր կորան այնչափ փողերս, որ ծախսեցի քեզ մարդ դարձնելու համար, ամէն օր կը կրկնէր հայրը. Ընչիս է հարկաւոր քո ուսումը, քանի որ յիմար ես: Ափսոս չէ՝ Խէչենց Սահակը. տես, դու չաղ է հա. այսօր Բագուումը նստած՝ 150 մանէթ տոնլուղ է առնում, ինքն էլ ոչ ուսում ունի, ոչ զատ. մարդու տղան խելացի էր. դա. իւր գործն իմացաւ, գնաց աղայի մօտ ծառայութեան մօտաւ, և այսօր նրա՝ տրեխը ծակ հայրը գիւղամիջին մարդ է դառել: Դու ով ես, դու Ընչ ես: Մարդ նրա նման զաւակ ունենալու է, որ հանգիստ ապրի իւր ծերութեան օրերում: Դու գաւակ չես, կրակ ես, կրակ»:

Ու ժողովրդական հալածանքի, ծնողական արհամարհանքի տակ ընկճուած՝ Մարտիրոսեան կը հեռանայ գեղէն ու կ'ընկնի Բագու: Իր ընկերները՝ ամէնքն ալ դարձած են արտասահմանէն ու ամէնքն ալ չաղ դործերու գլուխ անցած: Մարտիրոսեան անոնց կը դիմէ իրեն զբաղմունք մը ձարելու համար: Ամէնքն ալ երես կը դարձնեն ու նոյնիսկ չը ճանչնալու կը զարնեն ու իրենց տան դուռը կը փակեն ասոր առջի: Վերջապէս իր մէկ ընկերոջ շնորհիւ կը յաջողի գործակատարի պաշտօն մը ձեռք ձգել: Իր մէջ իդէալը բոլորովին մեռած չէ. կը հաւաքէ գործակատարներ և անոնց հետ «ընթերցանութեամբ և լուրջ ու օգտակար խօսակցութիւններով» կը պարապի: Բայց «խաղէինը» սաստիկ կը հակառակի այդ բանին:—Նրանք քեզ վատ օրինակ կը տան, նրանցից հեռացիր, կը կրկնէ շարունակ:

Մարտիրոսեան կը զարմանայ թէ ինչո՞ւ իր տէրը չը պիտի ուզէ որ ինք ուրիշ գործակատարներու հետ յարաբերութիւն ունենայ, կը զարմանայ թէ ինչո՞ւ խազէինը կը կասկածի իր վրայ: Այն ժամանակ իր ընկերներէն մէկը իրեն կը պատմէ թէ «կան գործակատարներ, որոնք մանր ծախքերի գումարն աւելցանում են և թէ հէնց իրենք խազէիններն այդ տիպի գործակատարներէն են, որոնք իրենց խարդախութիւնները չնորհիւ կարողացել են հարստութիւն գիշել»:

Մարտիրոսեան միամտութեամբ կը բողոքէ գողութեան գաղափարին դէմ: Բայց իրեն կը պատասխանեն.

«—Մեր ստացած փողը մեզ չի բաւականացնում. մեր կարիքները չատ են. թող վճարեն մեզ մեր կարիքների համեմատ, և մենք չենք գողանալ այլևս,» ասաց անկեղծութեամբ գործակատարներից մին:

«Մարտիրոսեանը զգաց, որ նա ճշմարիտ էր ասում. երեք ամսուայ ընթացքում իւր վրայ փորձել էր այդ նա չափը չէ, նոյնիսկ ազահ էր, բայց այդ երեք ամսում չէր կարողացել մի րուբլի յետ գցել:

«Երկար հոգեկան կռից յետոյ, ականայ յաղթուեց բարոյականութիւնը, որի միջոցով նա ուզում էր 300 րուբլի պարտքը վճարել և գիւղ գնալ՝ իր սուրբ պաշտօնը շարունակելու...»

Բայց չորս տարի յետոյ Մարտիրոսեան դարձեալ Բագուի մէջ էր, 100 րուբլով մէկի մօտ հաշւապահ: Պարտքերը վճարած էր, բայց մտքէն անգամ չէր անցներ Բագուէն հեռանալ:

Մարտիրոսեան գտեր էր «ապրելու գաղտնիքը»:

Գրուածքը գեղարուեստական արժէք չ'ունի:

ԶԱՒԷՆ

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Լևոն Մանուէլեան, «Նկարիչ Թաչճեան», զրամա 4 գործողութեամբ (արտատպած «Մուրճ» ամսագրից), Թիֆլիզ, 1903 թ., գինն է 35 կ.
- 2) Վ. Փափազեան, «Վեչապ» (զրոյց), Բագու, 1903 թ., գինն է 3 կոպ.
- 3) «Հազար ու մի խաղ», ժողովրդական երգարան, ա. յիսնեակ, խմբագրել ին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Աբեղեան, Վաղայ շապատ, 1905 թ., գինն է 10 կ.